PEARLS
OF ARMENIAN HERITAGE

Համբարձում - Մայիս 5, 2024

Համբարձում, Մլքէ Թագուհիի Աւետարան, 850-860 թ., Մխիթարեան Մատենադարան, Վենետիկ-Սուրբ Ղազար

Ղուկաս աւետարանիչ Տէր Յիսուսի եւ Առաքեալներուն մասին գրած իր երկրորդ հատորը հետեւեալ խօսքերով կը սկսի.

"Առաջին պատմութիւնը գրի առայ, ո՛վ Թէոփիլէ, այն բոլորի մասին, ինչ Յիսուս սկսեց անել եւ ուսուցանել մինչեւ այն օրը, երբ Սուրբ Հոգու միջոցով պատուէր տուեց առաքեալներին, որոնց ընտրել էր, եւ վերացաւ: Նա իր չարչարանքներից յետոյ իրեն կենդանի ներկայացրեց նրանց առաջ՝ քառասուն օրերի ընթացքում երեւելով նրանց բազում զարմանալի գործերով եւ խօսելով Աստուծոյ արքայութեան մասին: Եւ նրանց հետ հացով հաղորդուելով՝ պատուէր տուեց նրանց, որ Երուսաղէմից չմեկնեն, այլ սպասեն Հօր աւետիսին, "որը լսեցիք ինձնից, որովհետեւ Յովհաննէս մկրտեց ջրով, բայց դուք այս օրից ոչ շատ յետոյ պիտի մկրտուէք Սուրբ Հոգով:" Եւ երբ այս ասաց, մինչ նրանք դեռ նայում էին, վերացաւ, եւ ամպը նրան ծածկեց նրանց աչքերից: Եւ մինչդեռ ակնապիշ նայում էին նրա երկինք գնալուն, ահա նրանց երեւացին սպիտակ զգեստների մէջ երկու մարդիկ, որոնք ասացին. "Ով գալիլեացիներ, ինչու՞ էք կանգնել նայում երկնքին. այս Յիսուսը, որ ձեր միջից երկինք վերացաւ, պիտի գայ նոյն ձեւով, ինչպէս տեսաք նրան երկինք գնալիս:"

Համբարձման քրիստոնէական տօնին հետ կապուած են գարնանամուտի ժողովրդական հնագոյն ուրախութեան եւ գուշակութիւններու սովորութիւններ, որոնցմէ ամէնէն տարածուածն է վիճակահանութիւնը: Ուրախութեան՝ որովհետեւ բնութեան գարնանային զարթօնքին հզօր հրաւէրին անկարելի է չհամապատասխանել. գուշակութիւններու, որովհետեւ ապագային վրայ կ'ուզենք տարածել մեր կամքն ու մաղթանքը՝ խափանելով ըլլայ մարդոց չարութիւնը, ըլլայ բնութեան ծածուկ աղէտները:

Անդաստանի օրհնութիւններուն նպատակն է հրաւիրել աստուածային բարերարութիւնը, անձրեւներուն քաղցրութեամբ, բերքերուն առատութեամբ եւ դաշտերուն պտղաբերութեամբ: Վիճակի սովորութեան հիմնական միտքն ալ բարի եւ յաջողութեան գուշակութիւններ ընելն է մասնակիցներուն:

ՎիճակինպՊատրաստութիւնը կը սկսէր, նայած տեղական սովորութիւններուն, մինչեւ երեք օր առաջ: Սափորի մը մէջ եօթ աղբիւրներէ (կամ եօթ տուներէ) ջուր կը հաւաքուէր, եւ ապա մանկամարդ օրիորդներ թափօրով տուներէն նշաններ, բուրումնաւէտ բոյսեր եւ ծաղիկներ կը հաւաքէին սափորին մէջ: Համբարձման օրն ալ՝ բոլոր մասնակիցները մեծ խնճոյքի նստած՝ թամադան գուշակութիւն-մաղթանքներ կը բանաձեւէր, եւ հարսի նման զարդարուած մանկամարդ օրիորդ մը սափորէն կը քաշէր նշանները մի առ մի. մաղթանք-